

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 07-ի նիստի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/19

Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար **Անիվավոր տրակտոր համալրող սարքերով** ձեռքբերման **ԷԱՃ** ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է N ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/19 ծածկագրով հրավերի վերաբերյալ 06.10.2025թ. www.eauction.armeps.am համակարգի միջոցով ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 07.10.2025թ. տրամադրված պարզաբանումը.

Հարցադրում N 1.

Պարզաբանել՝

Հարգելի գործընկեր ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտարարության հրավերի Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «Անիվավոր տրակտոր/ համալրող սարքերով/» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «1» չափաբաժնով: Հրավերի տեխնիկական բնութագրում նշված Անիվավոր տրակտորը ՀՀ ներմուծելիս կամ իրացնելիս ազատված է ավելացված արժեքի հարկի/ԱԱՀ/ վճարումից, իսկ նույն տեխնիկական բնութագրում 3-րդ կետով որպես տրակտորի լրակազմ նշված Սրսկիչը՝ Տարողունակությունը առնվազն 2000 լ, ենթակա է հարկման ԱԱՀ 20 տոկոս դրույքաչափով: Հրավերի 5.2. կետի համաձայն Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ տրակտորի լրակազմ նշված Սրսկիչը առանձին ապրանքատեսակ է համարվում և ենթակա է հարկման ԱԱՀ-ով, Հարց 1. Հրավերով ապրանքի չափման միավորը <<լրակազմ>>-ի փոխարեն նշված է <<հատ>>: Արդյոք չի խախտվում ,, Գնումների մասին,, ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի կետերը՝ մասնավորապես 2-րդ մասը: 2. Եթե գնումը պետք է իրականացվի մեկ չափաբաժնով ինչ կարգով պետք է ներկայացվի գնային առաջարկը, մասնավորապես ԱԱՀ լրացման սյունակը, եթե Անիվավոր տրակտորը ազատված է ԱԱՀ- վճարումից, իսկ որպես տրակտորի լրակազմ նշված Սրսկիչը, ենթակա է հարկման ԱԱՀ 20 տոկոս դրույքաչափով:

Պարզաբանում N 1 Հարգելի գործընկեր Գնման առարկա հանդիսացող Անիվավոր տրակտոր /համալրող սարքերով/ ձեռք բերումը կազմակերպվել է մեկ չափաբաժնով որպես լրակազմ և հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ըստ տեխնիկական բնութագրի, անիվավոր տրակտորը չի կարող արդյունավետ աշխատել, եթե տրակտորի և համալրող սարքերի որակական չափանիշները չեն համապատասխանում միմյանց:

Պարզաբանում N 2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը ավտոմատ արտացոլում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել N ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/19 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Հրայր Հակոբյանին:

Հեռախոս 0232 31026 /114/, 093572839

Էլ. փոստ ashtarakgnumner@gmail.com

Պատվիրատու՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան